




ՏՆՕՐԷՆ-ԽՄԱԳԻՐ
ՅԱՐԱԽԹԻՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ ուր եւ է գրութիւն
պէս է ուղղել առ

ԽՄԱԳՐՈՒԹԻՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱՇԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՆ

Եգիպտոսի համար արեկն. ողջ դճ. 80
վեցամսեայ 50
Յար Երկրներ արեկն Զրաճ 25
վեցամսեայ 14
Թարասարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութեամբ հա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի արւիր:

ԴԱՐՄԱՆ ՄԸ

Բարիգէն կը գրուի թէ հայ ուսանողնե-
րու ընկերութիւն մը որոշել է իրենց ընդհա-
նուր ժողովին ատենապետութեան յարատե-
ւութիւնը շնչել: Ատենապետը մէկ նստի հա-
մար պիտի ընտրուի, և նստին հետ պաշտօնն
ալ պիտի վերջանայ, համապատասխան վարդ-
պետ, միայն թէ փոխանակ առտու մը տե-
ւելու գիշեր մը պիտի տեսէ — ան ալ ամ-
բողջ չէ:

Այս լուրը ինքնին նշանակութիւն չէր ու-
նենար և ուշադրութիւն պիտի չի գրառէր, ե-
թէ եւրոպայ գաղթող հայերու ընդհանուր
մէկ յատկանիշը երեւան չի բերէր: Եւրոպայի
մէջ հայկական շատ մը ձեռնարկներ խան-
գարուեցան «չէ՛, ան պիտի չըլլայ ատենապետ»,
ես պիտի ըլլամ» հետեւողով: չեղա՞ւ, ոչ
միայն կառնէ կը քալէ, այլևս հալածանքի ալ
կսկսի գործողներուն դէմ:

Յետոյ, ատենապետը ժողովին դուրս ալ
ատենապետ է. ամէն բանի մէջ կիցնայ, կը
մեքենայէ, կը խանդարէ, կուսակիցներ կը
ժողովէ գլուխը, իր պաշտօնին չի վերաբերող
գործերու կը խառնուի: Արդ՝ ատենապետու-
թիւնը բոլորովին չէզոքութիւն կը նշանակէ,
ատենապետը ժողովի մը էն անձնազօհն է,
մարդը ո՛չ կարծիք պիտի ունենայ, ո՛չ հա-
մակարանք, ո՛չ հակակարանք. ու եթէ կողմնա-
կալութեան տկարութենէն բռնուի, ան ալ
աւելի անոնց համար է որոնց համակարծիք
է կամ հակակիր: Ատենապետութիւնը տե-
սակ մը անձնաւարացութիւն է:

Գոնէ եւրոպայի մէջ ապրող հայերը խոր-
հրդարանական կեանքի վրայ դադափար պէտք
էր ունենային, եթէ այդ գաղափարը մինչեւ
իսկ հետեւին տարած չըլլային Պալիսէն ուր
տղան դպրոցէն կը վարժի ընկերութիւններ
կազմելու:

Գաղափար ունին հաւանօրէն, իրենց ընա-
ւորութեան սակայն չեն կրնար յաղթել:

Չենք գիտեր թէ Բարիգի ուսանողները
իրենց այս որոշումով լուծած պիտի կրնա՞ն
ըլլալ ամենադժուարին խնդիր մը որ չէզո-
քացուցած է ազգային շատ մը գործեր. իսկ
եթէ ընաւորութիւնները փոխելու գաղտնիք
մը գտնային, լաւագոյն ծառայութիւն մը մա-
տուցած կ'ըլլային:

ԱԿԱՄԱՅ ՀԵՐՈՍԸ

(ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՆ)

Ա.

Այնքանորից՝ խոհուկի մը մէջ՝ պատահեցայ
Յակոբ աղային, զոր Պալիս ճանչցած էի երբ Ղա-
լաթիս, թրամկայի ճամբուն վրայ, սարափութիւն
կընէր:

— Ի՞նչ բան ունիս հոս, հարցուցի հետաքրքրու-
թեամբ:

— Իմ պատմութիւնս, տարի ու կեսէ ի վեր,
գարնանալի է, նստէ՛ որ մտիկ ընես, ըսաւ:

Մէյմէկ սուրճ ապապրեցինք ու Յակոբ աղան
սկսաւ խօսիլ:

— Եւրոպայ չես գիտեր պիտեա եկածը, սկսաւ
պատմել: Օգոստոս 14ին, ցայցին օրը, խանութի
նստեր էի երբոր ազնուիւր բրդաւ ու ամէն մարդ
խանութիւնը գոցելով փախչիլ սկսաւ: Ես ալ ա-
մենուն պէս ըրի և շուշա Տէմիր խանի մէջ առի:
Չորս օր փակուեցայ հոն. երբ քիչ մը հանգստորո-
թիւն տրեց, դուրս ելայ: Խանութիւն ամբողջ թա-
լեր էին. ևս ալ՝ չիփթած՝ ապուշի պէս հոն ձգե-
ր էի բոլոր ստանկերս ու թուզեցաւ...:

— Խօսքդ մեղրով կը կտրես, աւելցուցի, որքեօր
իմ պարտաւորահալս ալ կորսնցուցած թուզի երոզ
հե՞տն էր:

— Ձէ, պատասխանեց Յակոբ աղա, դիպուածով
քու պարտաւորահալք գրաւես մնացեր էր:

Եւ շարունակեց իր պատմութիւնը:

— Նորէն դարձայ Տէմիր խան, որովհետեւ ամէն
մարդ «նոր բան մը պիտի ըլլայ» կըռէր: Այդ մի-
ջոցին պիտարկաւ մէկը եկաւ խան, հետը խա-
վաղով մը, ու հարցուց թէ դուրս երթալ ուղիւ կա՞ր:
մէջերնիս: Քսան հոգիի շափ պատրաստուեցան.
ես ալ մտքս ըսի որ անոնց հետ կը խառնուիմ ու
կամրջին գլուխը գտաւելով իսկիւստարի չոգեհաւը
կերթամ ու տոնես կը վերադառնամ. եւ հետեւին
դուրս ելայ:

Փաշայը քրիստոնեայ մը չի կար: Ամէն կողմ
ոստիկան ու սոփաճի. երբ կամրջին գլուխը հասանք՝
տեսայ որ խաւք խաւք տաճիկներ շարուեր են Սա-
կում մը տրեց վրաս. շիտակը սիրտ չըրի բաժնու-
լու մեր խմբին ու անոնց հետ ճամբաս շարունա-
կեցի քարափին վրայ:

— Շուտ ըրէ՛ք, չոգեհաւը ճամբայ կեղայ կոր,
գոչեց յանկարծ խափաղը:

Եւ սկսանք վազել:

Մեզի մտուցին քարափին քով կեցող ֆրան-
սական մեծ չոգեհաւ մը, ուր հազիւ թէ տեքերնիս
գրինք, ստեղծելով քաշեց ու մեկնեցաւ:

— Ո՛ր կերթանք կոր, հարցուցի քովս կեցող
ներէն մէկուն:

— Կեցի՛ր նայի՛ր չոգեհաւը քիթը ո՞ր կողմ
պիտի շիտիկ, պատասխանեց:

Պահ մը ետքը տեսանք որ դէպ ի Մարմարո
շիտիկեց քիթը:

— Է՛հ, աչքերնիս լոյս, ըսին հոն դառնալները,
դէպ ի ձերմակ ծով կերթանք կոր:

Եւ, շիտակը, չհասկցայ թէ ի՞նչ տարբերութիւն
կար դէպ ի ձերմակ կամ Սեւ ծով երթալուն մէջ:

բանի որ այդ միջոցին երկու ծովերուն վրայ ալ
ճամբորդելու միտք չունէի և մանաւանդ որ ընտա-
նիքս ու տղաքս իսկիւստար կը ձգէին առանց կարե-
նալ իրենց լուր մը տալու:

Ա՛խ աշուրներս լեցաւ երբոր Հարթմ խեղճիկի
մօտէն տեսայ Առապ Զատէի ծառերը և տանս ծըխ-
նելոյցը՝ ուրիշ մութ կեղար նոյն վայրկեան: Այդ
մութը միակ միտքարանքս եղաւ:

— Քանի որ ծխնելոյցն մութ կեղար, ըսի մըտ-
քիս, ըսել է որ ատենինքը ոչ չէ:

Երբեք չէի կարծեր թէ ծխնելոյցն մը ելած
մութը այդչա՞ր յուզմունք ու միտքարանք կրնայ
տալ մարդու:

Առապ կամայ մօտիւ կոխեց և մենք, չոգե-
հաւին կամրջին վրայ գտնուողներս, բոլորուեցանք
տարաքին վրայ ճաշերնիս ընելու համար: Ամէն մարդ
իր ծրարը լացաւ. մէկն ալ օղի սկսաւ լեցնել մեզի
խմեցինք ու կերանք:

Տաք օդ մը կար, սրայմաւ երկինք ու հոնդարո
ծով: Կեանքիս մէջ առաջին անգամն էր որ կը ճամ-
բորդէի. ի՞նչ աղար բան է աղկ օղով ճամբորդե-
լու մարդը բոլոր մտմտութիւնը կը մոռնայ:

Գլուխինս բաւական տաքցաւ ու սկսանք եր-
գել, կամ մանաւանդ ուրիշները երգեցին ու ես մը-
տիկ ըրի «Չայնը հնչեց» սկսան. ա՛լ ո՛չ «Գաղ-
ալիկ» մնաց, ո՛չ «Հերիք եղար որ այսքան տարուան
տոտասարանք». մէկ գիշերուան մէջ բոլոր յեղափո-
խական երգերը լսեցի:

— Տղաք, կըռէի երբեմն, խաճիկ մը չըլլայ մէ-
ջերնիս:

Որո՞ւ կըռես:

Առտուն Չանար-Գալէ հասանք: Խօսքս չերկա-
րեմ, իզմիր ալ հանգիստէն ետքը, չոգեհաւը հա-
սաւ Բիլէ: Տեսայ որ փախտաւորներուն մեծ մասը
կը պատրաստուի կոր դուրս ելելու, ես ալ անոնց
հետ ելայ, առանց գիտնալու թէ ի՞նչ պիտի ընեմ՝
այդ անձանքով քաղքին մէջ: Շոգեհաւի ընկերներէս
ոմանք ըսին որ հետեւին Մարմարո երթամ ու
անկէ Ամերիկա անցնիմ, բայց մտածեցի որ ո՛չ
ֆրանսերէն գիտեմ ո՛չ ալ անգլիերէն, մինչդեռ
յուսարեքնը բաւական կը յարմարեցնեմ. Ղալաթիսի
մէջ միշտ յոյներու հետ գարծ ընելով բաւական սոր-
ված եմ այդ լեզուն:

Յակոբ աղա հառաչանք մը արձակեց և ըսաւ:

— Բարով խեղով սորված չըլլայի:

Ու շարունակեց իր պատմութիւնը:

Բ.

Բիլէ՛, քարափին վրայ հազիւ թէ ելանք՝ խոսի-
մը հայեր չըլլապատեցին մեզի ու սկսան լուր հար-
ցնել Պալիս: Կրցածնուս շափ գոհացուցինք զի-
րենք: Մէջերնէն մէկը ինծի նշան ըրաւ ու անկիւն
մը տանելով հարցուց, խորհրդաւոր ծայրով:

— Մեր եղբայրներէն ի՞նչ լուր:

— Ո՛ր եղբայրները, հարցուցի զարմացած:

— Սուրը, Կայմալը, Շանթը, Արգարը:

— Չեմ գիտեր, այդ անուններով մարդ չեմ
ճանչնար:

— Ուրեմն դուն Հնչակեան կուսակցութենէս
ես, ըսաւ խօսակիցս, կը ներես, կարծեցի թէ մե-
նէ ես:

Ու հեռացաւ քովէս:

Հաղիւ թէ գայեր էր, ուրիշ երկու մարդ բովս եկան ու կամայ մը հարցուցին:

— Իրա՞ն է որ կոտորուի բռնուեր է:

— Կոտորուի, ո՞վ է կոտորուի:

— Չե՞ս ճանչնար կոտորուի:

— Չէ՛:

— Դուն Հնչակեանն չե՞ս:

— Չէ:

— Ուրեմն Դանիէլեանն ես:

— Չէ:

Մարդիկը պահ մը շուարած մնացին:

Մէկը հարցուց.

— Ձեր անունը ի՞նչ է:

— Յակոբ:

— Իսկական թէ կեղծ անունը:

— Ինչո՞ւ կեղծ ըլլայ, մկրտութեան անունն է:

Երկուքն ալ կատարած աչքով մը ինծի նույնցան: Կը սկսէին նեղութիւն գդալ այս հարցուփորձներէն երբ ուրիշ երեք հայ բովս ձուռնալով՝ մէջերէն մէկը ըսաւ.

— Յակոբ աղա, եկէ՛ք սուրճ մը առնենք միասին:

Կ'երեւակայես ուրախութիւնս երբ տեսայ որ անունս տուող անձը ծանօթ մըն էր. Պոլսեցի երիտասարդ մը որուն հետ գործ ունեցած էի երբեմն:

— Ա՛յ միտիւ Լեւոն, դո՞ւն ալ հոս ես եղեր, գոչեցի և ուրախութեամբ ընկերացայ իրեն գէպի սրճարան:

Ճամբան՝ Լեւոն ըսաւ ահանջաւ ի վար.

— Ինծի Լեւոն մի կոչեր հոս, այլ Սեդրաբ. կեղծ անունս Սեդրաբ է:

— Երկու հետի ընկերներդ ո՞վ են, հարցուցի ես ալ կամայ մը:

— Մէկուն անունը Մարտիրոս է, բայց Յովսէփ կըսուի. միւսն ալ կարապետ է, բայց Արթին կըսուի: Երկուքն ալ պատուական մարդիկ են: Կեղծ անուններն այսպէս է:

Քարափին վրայ սրճարան մը գայլնր ու նստեցանք: Երեք ընկերներս Պոլսոյ դէպքերուն վրայ մանրամասն տեղեկութիւններ հարցնելէ ետքը, վերջապէս Պ. Լեւոն ըսաւ.

— Յակոբ աղա, հիմա ի՞նչ պիտի ընես հոս, պէտք եղածին չափ ստակ ունի՞ս բոլոր, ապրելու համար:

— Ճշմարտութեամբ ասկի ու մէծաթիւն վը կայ բովս, ըսի, ես ալ չեմ գիտեր ընելիլս:

— Հոգ մի ընել, պատասխանեց այն անձը ուրուն անունը Կարապետ էր՝ բայց Արթին կըսուէր, անօթի չես մնար. . . .

— Մանաւանդ այս միջոցին, վրայ բերաւ Լեւոն ինքզնիքով, բանի որ Դանիէլէն հոս է:

— Դանիէլէն ո՞վ է, հարցուցի հետաքրքրութեամբ:

Այն ատեն երեք ընկերներս հակոցուցին ինծի որ Դանիէլէն կովկասցի երիտասարդ մըն էր որ Ա. մերիկայէն եկած էր բաւական դրամով և նպատակ ունէր խումբ մը կազմելով սլաւոնական սահմանազլխէն Թուրքիա մտնելու:

Այնքն եկած էր իր սրբաւանքին համար ընկերներ գտնելու: Տասը տասներկու հոգիի չափ իբր թէ համադրած էր և այժմ «հրահանգ» կապաւոր անոնց հետ ճամբայ ելլելու համար:

— Ամէն գիշեր մի կտեղ կը ճաշէնք, ըսաւ Լեւոն, ամենուս կերակուրը ինք կը վճարէ, որովհետեւ ա. մենքս ալ իր ցանկին մէջ գրուած ենք իբրեւ Կաւալուր: Քեզ ալ կը ներկայացնենք իրեն ու դուն ալ մեզի հետ կուտես առանց ծախք ընելու:

— Աղէկ, օրտառականեցի, բայց ես պարսկական սահմանազլխէն Թուրքիա սրբաւանքով փախար կամ՝ զիտաւորութիւն չունիմ ոչ ալ կարողութիւն:

— Արդէն մենք ալ չունինք, աւելցուց Լեւոն, միայն թէ հիմա Լեւոն կերակուրին հանելու համար անանկ կըսենք կոր: Շիտակը կուգես նէ՛ ինքն ալ տեղ մը արշաւելու միտք չունի: Դուն խօսքիս համազուէ ու մեր հետը եկուր. պարսկական տեղը ինչո՞ւ ծախք ընես, բանի որ աւելորդ ստակ չունիս բովդ:

(Շարունակելի) ԺԻՐԱՅԻ

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Յարուիւն Հայկական պաշիւ ունի ծանուցանել իր բազմաթիւ յանախորդներուն քե իր կօշիւ կարի խանութը Պապար Մուրուհին փոխադրած է Քաճե Էմբրսիէնի դիմացի կարգը՝ կազմ ընկերութեան կեդրոնին մօտ բաւաժին մէջ, գեթնայարկ, քիւ 6: Ձեւաւոր ու ընկիւ կօշիկներու պատրաստութիւն դիւրամասշտի գներով:

ԳԻՇԵՐԸ ԲԱՆՏԻՆ ՄԷՋ

Մերա՞յլ գիշեր, կուգաս թափել խաւարիդ Տըրտուրիւնը խոնար նեխոտ բանտիս խոր. Սարսուռներդ սրբոյ՛ն՝ մարմինս մէջ վըտիտ՝ երբ հոս անքուն կը դեղերիմ՝ սրբաւոր:

Գիշերաւան աստղն իմ մրտերիսն է նըւալ՝ Որուն արցունքն ագահաբար կը խըմեմ. Ծակէ՛ խաւարն, ո՞վ ասող, որմիս անձիմաղ. Համբոյքս սառմ սառած՝ ճակտիդ բու վըսեմ:

Սէ՛ր գիշերի, որ թայ հետքիս կը փարիս, Կը հասկընամ յուզմունքներդ, և կուլամ. Վե՛հ Սիտաւանի սիրահարած իմ հոգիս Տա՛ր թեւիդ մէջ՝ երգելու սուգն իմ տարտամ:

Ազատութեան գերեզման, գերեզման, Բանտը՛ ի դո՞ւր կը փորձէ չէջն իմ կայծին. Կ'որոտայ սիրտս անհուն խանդով աննըման. Ըստուերներս հետ երազներս կը յաճին:

Շղթաներու ծայրը չաղդեր ինծի վախ, Կիկիկայի սէրը առիւծ կ'ընէ իս. Բանտիս սըլտուր չորս պատին մէջ զըլտակիս՝ Կը հըծծեմ միշտ հաւատքն անուշ իմ ուխտիս:

Այգուն տըկար չողը կիջնայ հոգեոյս մէջ. Մարած աչքըս կը դարձնեմ իմ չորս դին: Ո՞վ Սիտաւանի ճամբորդ թըռչուն նըրբամէջ, Աւերներուն տա՛ր հաւաքանքն իմ սըրտին: Զ.

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ԱՂՔԱՍԱՆԱՍԸ

Much ado about nothing

Այսպէ՞ս պիտի վերջանար . . .

Երկու կամ երեք շաբաթ առաջ, հիւնգարի կամ ուրաք գիշեր մը, շաւ չենք յիշեր, Աղեքսանդրիոյ հայերը միմեջեւ առնուանում անցուցած էին իմանալու համար երբ այն ընտրողական ժողովին ուր հիւները կը դրուէր ապագայ Աղբասախանիւն: Տենդազին գիշեր մը, ուր կիրճեր իրար քաղխած, կուսակցութիւնները իրար խառնուած, մեծը պզտիկին դէմ, զօրաւորը սկաւիւն, տեղացին . . . անտեղիին հետ, երիտասարդները եւ ծերերը ձեռք ձեռքի տաւ, միմեջեւ առնուան ժամը երեք քանակացած, կրոնաւոր, ինքնացած, պոռնացած, ընտրած, քուսարկած եւ վերջացուցած էին: Արշալոյսին դէմ ընկերութիւնը կը ծնէր, զգացումներու աղբ Derby . . . nightէն: Ծննդաբերութիւնը դժուար եղած էր, հետեւապէս ընկերութիւնը forcepsներով դուրս կուգար:

Նորածինը մեծ յոյսեր կուսար, հարուստ մօր մը աղջիկեկին պէս: Գուշակութիւն ընողներ զսնունցան որովհետեւ կապահովցնէին քե վեց ամիս ետք՝ մէկ աղբաս իսկ յայտնի մնար փաղիին մէջ, այնքան շաւ կազմակերպուած, շաւ կարգադրուած ընկերութիւն մըն էր նոր Աղբասախանիւն:

Աղեքսանդրիոյ հայերը գոն եւ զուարթ դէմք մը առած էին այն վայրկեանէն ուր ընկերութեան ծնունդը իմացան, գոհունակութիւն մը գոր ՊՊ. Այնէն Այսերուսեւ անուցած ըլլալու եւ երբ իրենց յանձնուեցաւ ուրիշ ընկերութիւն մը . . . Խօշիկակներ:

Բայց, առա՞յ . . .

Զի վաղորդայնն է իսկուր Այսոր աղբ ընկերութիւնը, աղբ աղբկայնոյ մարմինը ոչ եւս է:

Այս անակնկալը՝ մեղադրանքի մէջ ապահարգանքի մը համը ունի:

Նորակազմին ասեմապետը կը հրաժարի եւ ա՛յ մեջեջէր մարդ չես տեսներ:

Ընկերութիւն . . . հարաբայ:

Ասանկ պիտի ըլլար, հէ՞:

Երբ հայերս՝ գործի մը սխաւ ասեմապետաւ եռանդին վերջացուցած ասեմապետաւ, այսօր Աղեքսանդրիոյ քերտու աղբաս չէր ունենար, քայց ապահարգանքաւ Աղբասախանիւնը ընկերութիւն մը կուտես:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Իսկէնտէրունէ առնուած լուրերու նայելով թուրք կառավարութիւնը կըսնդէ եղեր թէ Լոյտի ընկերութեան Մէրիին գործակալ Պ. Պրաճօֆօրի պետական դաւաճանութեան մը մասնակից եղած է և հետեւաբար պէտք է որ դատի ենթարկուի: Կը յիշուի թէ ասկէց առաջ Պ. Պրաճօֆօրի օսմ. իշխանութիւններուն կողմէ կրած անարգանքին համար Աւստրիա պատուոյ հատուցում պահանջեց Թուրքիայէն, Մէրիին առջեւ մարտանաւեր դրկելու սպառնալիքով, ու գոհացում ստացաւ: Հիմակ ալ Աւստրիա կը համակերպի Թուրքիոյ պահանջման, և Լոյտի գործակալը աւստրիական դեսպանատան պատուիրակի մը ընկերակցութեամբ նախորդ շաբթուն Պոլիս տարուեր է հարցաքննուելու և դատուելու համար:

— Տէրի թէ չէրամ հաստատուել այն լուր թէ Ռուսիա կը հրաժարի Եօրկիոս իշխանին ընտրելութիւնը պաշտպանելէ, կաւեյցունէ թէ ասկից զատ մտադիր է նաեւ ետ կանչալ կրէտական շուրերուն մէջ գտնուած ռուսական նաւատորմը:

— Եօրկիոս իշխանը, որ Քորէնհակ, Բաբիզ և Լոնտոն պիտի այցելէր ամառն մէջ, յետաձգել է իր ուղեւորութիւնը, իր ընտրելութեան խնդրին ստացած երեւոյթին պատճառաւ:

— Կրէտէն կը հեռագրեն եւրոպական թերթերուն թէ Ռէթիմօ գաւառէն հարիւրաւոր դիւղայիններ՝ չի կրնալով տակալ այն թշուառութեան որուն մասնուած են կղզիին մէջ, Հանեա գայեր են անկից ալ Յունաստան դադլելու համար: Կղզիին գրեթէ ամեն կողմը, խեղճութիւնը ծայրագոյն աստիճանի հասեր է:

— Կ. Պոլսէն խաւարական թերթերուն ուղղուած հեռագիր մը կըսէ թէ, Եօրկիոս իշխանին ընտրելութեան առաջարկը ետ առնուելուն վրայ, ռուսական դեսպան Պ. Չինո, վիէֆ խնդրեր է Սուլթանէն որ ինքը օտարազգի ընտրելի մը ներկայացնէ Կրէտէի կառավարչութեան պաշտօնին համար:

— Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Պ. Փօն Պիւլօֆ խորհրդարանի փետրվար 9ի նիստին մէջ հետեւալ յայտարարութիւն ներն ըրեր է ի մասին Գերմանիոյ արեւելեան աշխարհալարութեան.

Մեր միակ շահը Կրէտէի մէջ սա է որ այդ կղզին քար գայլաղութեան կամ պատերազմի մը շարժառիթ չի գտնայ: Մեզի համար բնու նշաւ նախութիւն չունի որ այսինչը կամ այնինչը եղեր է կղզիին կառավարիչ: (Ժիմաղներ եւ ծափահարութիւններ): Մշտապէս խաղաղութիւն մը հաստատուելու համար, հարկ է որ նկատողութեան առնենք

ՖՐԱՆՍԱՅԻ ԴԵՐԸ

ԱՐԵՒԵԼՔԻ ԴՈՐԾԵՐՈՒՆ ՄԷՋ

Աւաստի բովանդակութիւն վը այն ողջամիտ աւտենաբունութեան զոր Փրանսական խորհրդարանի փետրվար 5ի նիստին միջարտասանեց երեսփոխան Պ. Տընի Գօշէն, արտաքին գործոց պալատէին վիճարանութեան առթիւ :

Ատենաբանը կը յիշեցնէ թէ տարի մը առաջ արտաքին գործոց նախարարը կը յայտարարէր խորհրդարանի բեմէն թէ Եւրոպայ որ բաւական զօրաւոր է իր կամքը յարգել տալու համար Յունաստանի, նոյն ընթացքը պիտի բռնէ Սուլթանին նկատմամբ : Անկէց ի վեր, Եւրոպայի կամքը արտայայտուեցաւ ի կրէտէ, յետոյ ի Յունաստան, ուր ապահովեց պատերազմիկ կողմերէն մէկուն յաղթանակը : Եւրոպայի կամքը նորէն յարգուեցաւ, երբ իր իրաւարարութիւնը առաջարկեց Յունաստանի : Ինքը չէ՞ր որ պարտաւորեց այդ երկիրը պատերազմական մեծագումար տուգանք վճարել թուրքիոյ և միեւնոյն ժամանակ հեղինական արժեթուղթ ունեցողներուն պահանջը կարգադրել :

Բայց Եւրոպայի այդ կամքը, որ այնքան խիստ էր Յունաստանի համար, ի՞նչ կերպով արտայայտուեցաւ Սուլթանին նկատմամբ : Յունաստանը հարկադրեցին ելմտական քոնդուլ ընդունելու : Սուլթանը ի՞նչ բանի հարկադրեցին : Կրէտէի ինքնօրինութիւնը ընդունելու : Բայց այդ ինքնօրինութիւնը տէրութեանց միջամտութենէն առաջ ընդունած էր Սուլթանը : Կրտէն թէ Եւրոպա ստիպեց Սուլթանը թեւաւրիան ետ տալու : Բայց չէ՞ մի որ սահմանադրութիւն փոփոխումներ կատարեցին ի նըպաստ թուրքիոյ :

Ճշմարտութիւնը սա է որ, Եւրոպայի ձայնը անողոր հնչեց Յունաստանի համար, իսկ համար մնաց Սուլթանին առջեւ : Եւ սակայն ո՞ւր իրաւունք, ո՞ւր արդարութիւն : Գաղաքակրթութիւնը յոյներուն հետ էր : Բարբարոտութիւնը՝ տաճիկներուն հետ :

Իր հեռագրերէն մէկուն մէջ, Պ. Հանսօթօ կը հաստատէր թէ Յունաստան որեւէ շահ չունէր Կրէտէի տիրանալուն մէջ, թէ իրեն համար ծանր բեռ մը պիտի ըլլար այն : Այսպէս չէր սակայն կարծիքն այն մարդկանց ուրոնք հիմնեցին Յունաստանը : Քարօ տ'Իսթրիա կը յայտարարէր թէ, ուռանց Կրէտէի, Յունաստան երկուքի բաժնուած մարմին մը պիտի նմանէր : Կրէտական ապստամբութիւնը ուրիշ նպատակ չունէր բայց եթէ Յունաստանի հետ միացում :

Թուրքիա չի յարգեց Հալէքաի դաշնագիրը : Ասի յայտարարուած էր այն ծանուցադրին մէջ զոր 1896 դեկտեմբերին վեց մեծ տէրութեանց դեսպանները տուին Սուլթանին և որոնց նաւերը վեց ամիս ետք կը ուրմբակոծէին ապստամբները : 1896ի Եւրոպան քանդեց ինչ որ կանգնած էր 1830ի Եւրոպան : Բարձրացուց իսլամութեան դրօշը : ուսկնյանդիման տրայաւ Օրիանթալներու քերթողին (Վիքթօր Հիւկօի) հռչակաւոր տաղերը :

Մեծ տէրութիւններէն մէկը կայ որ ու-

Կիրակի, 13 փետրվար. — Ջինուորական վիաներուն ունկնդրութիւնը սաստիկ վիճաւանութիւններու տեղի տուաւ եղեռնադատատենի նախագահին և ամբաստանեալներու փաստաբաններուն միջեւ : Ընդհանուր կերպով, երէկուան նիստը շահեկան չէր :

Երկուշաբթի, 14 փետրվար. — Նախկին նախարար Պ. Իվ Կիւլեօ կը յայտարարէ թէ ինք համամիտ է Պ. Ջօլաի ընթացքին : Մասնագէտ Պ. Թէյսօնիէն կը պատմէ, ընդհանուր ուշադրութեան մէջտեղ, թէ ինք ի՞նչպէս մերժած էր դրամական առաջարկներ որոնք եղած էին իրեն՝ Տրէֆիլսի ի նպաստ եղրակացութիւն մը հանելու համար ձեռագրերու քննութենէն : Այս անգամ ալ, որ և է միջադէպ չի պատահեցաւ նիստէն ետք :

Երեքշաբթի, 15 փետրվար. — Այսօրուան նիստին միակ հետաքրքրական կողմը սա էր որ՝ ձեռագիր ճանչնալու մասնագէտ քննիչներ ինչպէս նաեւ Գիտութեանց Ակադէմիի երկու անդամներ յայտարարեցին թէ հռչակաւոր պօրտքօն էսթէրազի հրամանատարին գիրով գրուած է :

ՏԵՂԱԿԱՆ

Բարձր Խորվը որ երկուշաբթի օր Մոնթազհ գացած էր, երէկ իրիկուն Գահիրէ վերադարձաւ :

— Բուէն Օսման փաշայի մահուան առթիւ խափական արքունիքը 40 օր սուգ պիտի պահէ, հետեւաբար Խորվը այս տարի պարահանդէս չպիտի տայ Ապրիլի պալատին մէջ :

— Պայրամի տօներու առթիւ կառավարական բոլոր պաշտօնատուները գոյ պիտի մնան առաջիկայ երեքշաբթի և չորեքշաբթի օրերը :

— Անգլիական ընկերութիւն մը Պառաժի երկայնքը գտնուած պետական հողերը ծախու աւանելու առաջարկ մը ներկայացուցած է կառավարութեան : Այդ հողերուն վրայ պիտի հաստատուին ուղիւղ ըմպելիներու և նպարեղէններու գործարան մը : Նոյնպէս առաջարկութիւն մը եղած է նոյն հողերուն վրայ հաստատել մանածի գործարան մը :

— Ռուսական գործակալութեան առաջին քարտուղար Պ. Բրեպրաթէնքի, որ երկու ամսուան արձակուրդով Բեդրապուրկ մեկնած էր իր առողջութիւնը դարմանելու համար, անցեալ երկուշաբթի մեռեր է :

— Անգլիացի ղեկավարի մը կողմէ սպաննուած արաբ տղուն մայրը մերժած է ընդունիլ հարկուր ոսկիի գումարը զոր Աղքատանդիոյ անգլ. հիւպատոսը իրեն յանձնած էր յանուն Անգլիոյ թագուհւոյն : Կենթադրուի թէ Բատօս պէյ, այդ կնկան փաստաբանը խրատած է չընդունիլ այդ չնչին վարձատրութիւնը, որ կրնայ դժուարութիւններ յարուցանել արդէն բացուած գատին մէջ :

— Անցեալ նոյեմբեր ամսուան մէջ Սուտանցի 7 էրիկմարդ և 13 կին գերիներ աւազադրուած են ամբողջ Եգիպտոսի մէջ :

— Այս առտու Բօռ Սայիտէն հասած հեռագիր մը կը հաղորդէ թէ անգլիական Վիգթորիա զրահաւորը խրեր է Սիւէզի ջրանցքին մէջ :

Նաեւ Ժողովարդին փորձառամտութիւնը և անոր ապահովութիւնը : Բայց խաղաղութեան խնդիրը աւելի կարեւոր է քան խաղաղութեան ճակատագրին խնդիրը : Կղզիին մէջ իրարու գէժ կոտոր կռուակցութիւններուն համար մենք չենք կրնար տրտմուղրել ոչ մեր ցամաքային ղեկավարներուն ոչ ալ մեր նաւագներուն ղեկավարները : Գերմանիա մինչեւ այսօր համակերպեցաւ տէրութեանց կողմէ միաձայնութեամբ տրուած սրտումներուն և պիտի յարատեւէ այս ընթացքին մէջ, յուսական է որ չի խնդրուի մեզմէ ոտանձնել պատմափաստութիւն մը որ չի համապատասխանէ Գերմանիոյ արեւելեան աշխարհավարութեան : Եւ ճիշդ Գրան հանգէպ մեր բռնած այս զգուշաւոր ընթացքն է որ թոյլ տուաւ մեզ քանկոյ խորհուրդ տալ անոր՝ ակունջ կախել տէրութեանց միաձայն գիտողութիւններուն :

Մենք չի պիտի մասնակցինք բնաւ Գրան վրայ ի գործ դրուելիք իրական ճնշումի մը (հաւանութեան նշաններ) : Անեղ ճամբաներու մէջ չի պիտի մտնենք՝ Կրէտէի խնդրին համար : Միեւնոյն ժամանակ, չի պիտի ընդգիծանանք որ Գրան համաձայնի բոլոր տէրութիւններուն հետ՝ Յունաստանի Եօրկիոս իշխանին ընտրելութեան վրայ : Բայց եթէ վէճ մը ծագի, մէկ կողմ պիտի բաշտինք : Վար պիտի դընենք սրինգիմ ու պիտի մեկնինք Բոնաքի սրահէն (Ընդհանուր ծիծաղներ եւրոպական ներդաւանակութեան մասին եղած այս բառախաղին վրայ) :

Այսպէս շարժելով հակառակած չի պիտի ըլլանք Բուսիոյ որուն հետ հնաւանդ կապերով և բազաբարան կարեւոր շահերով կապուած ենք ու որեւէ անհամաձայնութիւն չունինք :

Պ. Ֆօն Պիւլօֆ իր ատենաբանութիւնը վերջացուց յայտարարելով թէ Գերմանիա՝ իսպաղաղութեան պահպանման տեսակէտով միայն պիտի զբաղի արեւելեան գործերով :

— Մինչ Գերմանիոյ արտաքին գործոց նախարարն այս յայտարարութիւնները կրնէր, անգլիէն, Անգլիոյ խորհրդարանին մէջ, գահաճառին ի պատասխան խմբագրելի ուղերձի վիճարանութեան առթիւ, Լորտ Սոլպսբիի կարծիքը կը յայտնէր թէ «Թուրք ղեկավարներն հարկաւոր են Կրէտէի մէջ բարեկարգութիւնն հաստատելու համար» : Գալով Եօրկիոս իշխանին ընտրելութեան, նախարարապետը՝ ըսելէ ետք թէ կը դգիին արդի կացութիւնը նախատինք մըն է Եւրոպայի համար, կը յարէ թէ Անգլիա ուժ պիտի տայ որեւէ ընտրելի որ թուրք կամ անգլիացի չըլլայ : Եօրկիոս իշխանը մտաւորապար կառավարիչ մը չէ, իրաւ, բայց անկից յոռեգոյն կառավարիչ մը նախամեծար պիտի համարուի կղզիին հիմակուան անիշխանութենէն :

ԶՕԼԱՒԻ ԴԱՏԸ

Բարկլէն հասած հեռագրերները կը շարունակեն միմիայն Ջօլաի դատաւին զբաղել, ուսկից դուրս որ և է խնդիր նշանակութիւն չունի այս միջոցի ամբողջ Ֆրանսայի համար : Աւաստի Փարոսի վերջին թիւին հրատարակութենէն մինչեւ այսօր յետ միջօրէի հասած հեռագրական տեղեկութիւնները :

Շաբաթ, 12 փետրվար. — Եղեռնադատատենի երէկուան նիստին մէջ, բուռն ոճով հերքումներ փոխանակուեցան տեղակալ-գընդապետ Բիքաուի և գնդապետ Հանրիի միջեւ : Պ. Տըմանտ կը վկայէ թէ Տրէֆիլսը դատապարտող պատերազմական ատենին անհամակցող սպայ մը յայտարարեւր է իրեն որ ոչ մէկ դատունի պաշտօնաթուղթ չէր հաղորդուած պատերազմական ատենին : Յետոյ կը ըսուի մասնագէտ քննիչ Պէրթիլեօն որ կը պնդէ թէ պօրտքօն բուն ի վ Տրէֆիլսի գրովը գրուած էր : Նիստէն ետքը որ և է միջադէպ չի պատահեցաւ :

ընդերքէն առաջ անցաւ Յունաստանի դէմ իր
ցըցուցած կատաղութեամբ : Այդ տէրութիւն
նը Գերմանիան էր : Առաջին անգամ ինք
յղացաւ ելմտական քոնդորի գաղափարը :
Գալով Անգլիոյ, որ ընդգիմացաւ հելլենա-
կան ծովեղերաց պաշարման, ու ետքէն ալ
ելմտական քոնդորին, փորձեց իր իշխանու-
թիւնը տարածել ինքնօրէն կրէտէի վրայ :
Վերջապէս, մեր Ֆրանսան համակերպեցաւ
Յունաստանի նկատմամբ ձեռք առնուած բո-
լոր խտուրթիւններուն :

Դեղին Տետրակը մեզ կիմացընէ, ար-
տաքին գործոց նախարարին ստորագրու-
թեամբ, թէ ելմտական քոնդորի մասին ինքը
լաւ խորհուրդներ տուած է Յունաստանի :
Բայց որո՞նք են այդ խորհուրդները : Յունաս-
տան իբրեւ շնորհք մը կը խնդրէր որ զինքը
եւրոպական քոնդորի մը ենթարկելու ստոր-
նութենէն ու կործանումէն ազատ թողուն :
Կարելի՞ բան է հաւտալ թէ Ռուսիոյ հետ
մեր դաշնակցութիւնը հարկադրած ըլլայ զմեզ՝
տկարներուն ու ճնշողներուն դէմ ելլել :

Պ. Հանօթօ (Ընդմիջելով). — Մենք եւ-
մտական քոնդորը ընդունեցինք Յունաստանի
օգտին համար (Բացագանչութիւններ ձախա-
կողմեան նստարաններէն) :

Պ. Տրնի Գօշէն (Շարունակելով). — Ֆրանս-
սան կրնար ուրիշ քաղաքականութեան մը հե-
տեւիլ, վաճառել իրեն կը պատկանի միշտ ար-
դարութիւնը ու ազատութիւնը պաշտպանել :
(Մափահարութիւններ)

Հանրային կարծիքը, Ֆրանսայի մէջ, ի
բնէ վեհանքն է միշտ : Ան էր որ արդէն ու-
ղեւորեց այն բոլոր ֆրանսացիները որոնք աշ-
խարհ կը պտտին՝ իբրեւ անշահախնդիր ա-
խոյեաններ ազատութեան : (Կրկին ծափահա-
րութիւններ)

Այսօր կերեւայ թէ փոխառութիւններու
համար միայն կը պատերազմին մերինները :
Եւ իբրեւ պատմական անցքեր ապագային մէջ
թերեւս արձանագրուին եգիպտական և յու-
նական փոխառութիւնները : Ահ, եթէ աղա-
տական Ֆրանսան գիտնար իր ձայնը բար-
ձրացունել, առանձին չի պիտի մնար : Կըր-
նար առաջին տեղը զբաւել : Կրնար իր վե-
հանքն կամքին հպատակեցունել ամենքը :
Երանի՜ թէ օրին մէկը չի զղջայ այսպէս շար-
ժած չըլլալուն համար :

ՏԻԿԻՆ ՍՕՖԻԿ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ

ՄԱՆԿԱԲԱՐՁ

Տիկին Ազգապետեան որ ծանօթ է իր արհեստին
մէջ ունեցած հմտութեամբ եւ վարպետութեամբ, կը
ծանուցանէ իր բազմաթիւ յաճախողներուն ինչպէս
նաեւ յարգոյ հասարակութեան քե իր բնակութիւնը
փոխադրած է եկեղեցիի մօտ Խուրուցի փողոցը
բիւ 53. (Ֆոտոգրաֆ վարժարանին հովանի փողոց) :
4—5

Ա Զ Դ

Եկեղեցւոյ փողոց ԱՐԱՐԱՏ դեղատոմսի մէջ
ամեն օր կես օրէ ետքը կարելի է գտնել տօք. ձե-
րահետն. ծանօթ բժիշկը՝ վկայեալ Բարիզի համա-
լսարանէն, որ պիտի ընդունի իրեն զիմող հիւանդ-
ները :

Ուրբաթ օր կես օրէ վերջ ձեռն դարմանում աղ-
բացներու համար : 4—4

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱԻԱԳԵԱՆ

ԳԱԶԻՐԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՍԵԹԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախող-
ները պիտի գտնեն եւրոպական բազմաթիւ գործա-
րաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գիներով :
Դեղագիրները ամենայն խնամօք և ուշադրու-
թեամբ կը պատրաստուին :

Անգլիական և ֆրանսական սքեսիալիքներ :
Թարմ հանգալիք ջուրեք, անուշահոտութիւնք եւն.
բնալուծական և մանրադիտական քննութիւնք :
Դեղարանս կը յաճախեն հայ և օտարազգի ծա-
նօթ բժիշկներ :

Բժշկական ձրի խորհրդածութիւնք աղքատաց
համար : 26—50

ՖՕԹՕԿՐԱՅԻ ԷԺԻԲՍԻԷՆ

Ք. ՊԻԻՔՄԷՃԵԱՆ

ՇԱՐԱ ՍՈՒՀԱՄՄԷՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործու-
թեան համեմատ հաստատուած այս լուսանը-
կարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ
կը հանուին զոհացուցիչ գիներով :

Ամեն մեծութեան ԱԿՐԱՆՏԻՍԸՄԱՆՆԵՐ :
10 — 10

Ա. ԼԷԹՈՒԱԼ

Կ. Պոլսոյ մէջ Հանրածանօթ ՊՈՍՏՈՐ Վաճառա-
տունէն Տետրք Յովակիմեան Եղորտք այսօրեւոր հա-
տատուած են ի Գազիթէ և Մուսի փողոցը՝ Լաթիֆի
զոհարարածատան զիմայ բացած են վաճառատուն
մը ուր կը ծախուին բոլորեղէն և լուսանկարչէն ձեռնարկ,
գուլպայ և դանդաղ տեսակ ընտիր շապիկներ, օձիք-
ներ, քեւցոցներ :

Ճօս ցանաղանութիւն մարօֆէնքի, հոսեղէններ,
բու և արդուզարդի վերաբերեալ ամեն տեսակ սարա-
նայ : Շէֆիլթի հոշակաւոր պոլսոստեայ գործիներ,
ածելի, մկրաս, զմեյի ևն :

ԱՊՐԱՆՈՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ և ԱՆՄՐՅԵԼԻ ԳԻՆԵՐ :
Գաւառներէն եկած յանձնարարութիւնը ճշդիւ և
փութով կը կատարուին : 24—24

ԼՈՒԱՅԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻԶ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՒԷԹԻ, ՇՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒԱՅ ամեն տեսակ ճերմակեղէններ
ու հագուստներ. ԿԱՐԴԻԷ արանց և կանանց
շապիկներ, շրջագդեւտներ, ևն. մաքրութիւն,
ճշգրտահարութիւն, և խիստ չափաւոր գին :
21—24

Le Gérant: Dr. A. S. HAGOPIAN
Տպագրութիւն ՓԱՐՈՍ Երզրի

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԵՐԹԵԻԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱԶԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԳԻՐՈՅ ԳԻԹ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Լաւոն 1, 2, 3 կգ.	Օմնիպ. 1, 2, 3 կգ.	Կէս ուղ. 1, 2, 3 կգ.	Օմնիպ. 1, 2, 3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Օմնիպ. 1, 2, 3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Օմնիպ. 1, 2, 3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.
Գազիթէ	մեկ. 4 45	—	7 30	8 15	9 30	3 30	4 45	7 15	երկ. 11 —
Պէնհա	» 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	առ. 12 35
Թանթա	» 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	» 1 44
»	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	» 1 54
Տամանհուր	» 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	» 3 51
Աղեքսանդրիա	» 6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	» 5 50

ԱՂԵՔՍԱՆԳԻՐՈՅԻ ԳԱԶԻՐԷԻ ԳԻԹ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Օմնիպ. 1, 2, 3 կգ.	Կէս ուղ. 1, 2, 3 կգ.	Օմնիպ. 1, 2, 3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Լաւոն 1, 2, 3 կգ.	Օմնիպ. 1, 2, 3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Օմնիպ. 1, 2, 3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.
Աղեքսանդրիա	մեկ. —	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	երկ. 11 —
Տամանհուր	» —	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	առ. 1 9
Թանթա	» —	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	» 2 56
»	մեկ. 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	» 3 6
Պէնհա	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	» 4 25
Գազիթէ	» 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	» 5 50

ԳԱԶԻՐԷ-ՍԻԷԷԶ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԷԷԶ-ԳԱԶԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՐՈՅ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՐՈՅ	ԵՐԵԿՈՅ
Գազիթէ	մեկ. 11 40	7 —	Սիւէզ (քաղաք)	մեկ. 9 50	—
»	երկ. 12 28	7 48	» կայարան	» —	3 30
Պէնհա	մեկ. 12 33	7 53	»	երկ. 1 20	7 5
»	» —	» —	»	» —	» —
Ջակադիկ	» 1 34	8 54	»	» —	» —
»	մեկ. 1 44	9 4	»	» —	» —
»	» —	» —	»	» —	» —
Խամալիա	մեկ. 3 40	1 —	»	» —	» —
»	» —	» —	»	» —	» —
Սիւէզ կայարան	» —	5 —	»	» —	» —
»	» —	» —	»	» —	» —
Տօք (քաղաք)	» 6 55	—	»	» —	» —